Մատթեոս 10.37–39

Զույգերով կամ փոքր խմբերով ուսումնասիրեք հանձնարարված հատվածները և քննարկեք հարցերի պատասխանները:

Կարդացեք Մատթեոսի 10.37–38 հատվածները և ուշադրություն դարձրեք այն զոհաբերությունների վրա, որոնք ըստ Փրկչի խոսքերի մենք պետք է պատրաստ լինենք անելու՝ որպես Իր աշակերտներ: Այս հատվածներում «արժանի … ինձ» արտահայտությունը նշանակում է արժանի լինել ներկայացնելու Տիրոջը և արժանի լինելու Նրա օրհնություններին:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է անհրաժեշտ, որ Հիսուս Քրիստոսի աշակերտները սիրեն Նրան բոլորից, այդ թվում՝ իրենց ընտանիքի անդամներից առավել:

Խաչը, որը նշված է 38-րդ հատվածում, ակնարկում է այն ֆիզիկական խաչը, որը Հիսուս Քրիստոսը կրեց և որին բարձրացվեց՝ իրականացնելու համար Իր Հոր կամքը: Փոխաբերական իմաստով Հիսուս Քրիստոսը կոչ արեց Իր հետևորդներին նմանապես «[իրենց] խաչն առնել և [Իր] հետևից գալ» (Մատթեոս 16.24):

Կարդացեք Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը, Մատթեոսի 16.26 (Մատթեոսի 16.24, տողատակի գրառում *ե*) և ուշադրություն դարձրեք, թե ինչ է նշանակում մեզ համար առնել մեր խաչը և հետևել Հիսուս Քրիստոսին:

Կարդացեք Մատթեոսի 10.39 հատվածը և ուշադրություն դարձրեք զոհաբերությանը վերաբերող սկզբունքներին, որոնք Հիսուս Քրիստոսն ուսուցանեց: Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը պարզաբանում է այս հատվածի սկզբնամասը, որը կարդացվում է «Նա, ով ցանկանում է փրկել իր կյանքը. . .» (տես հատված 39, տողատակի գրառում *ա*): Այս ենթատեքստում «փրկել իր կյանքը» արտահայտությունը նշանակում է ապրել եսասիրաբար, այլ ոչ թե ձգտել ծառայել Աստծուն և Նրա զավակներին:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս պետք է այն մարդիկ, ովքեր կենտրոնանում են իրենց սեփական կամքի և եսասիրական ցանկությունների վրա, ի վերջո «կորցնեն» իրենց կյանքը:

Հիմնվելով ձեր կարդացածի վրա, լրացրեք հետևյալ սկզբունքը.

Եթե մենք ձգտում ենք փրկել մեր կյանքը, ապա _____. . .:

Կարող եք 39-րդ հատվածում նշել այն խոստումը, որը Փրկիչը տվեց այն մարդկանց, ովքեր կորցնում են իրենց կյանքը հանուն Նրա: Հանուն Նրա մեր կյանքը կորցնելն ավելին է, քան պատրաստակամությունը մեռնելու Նրա համար: Դա նշանակում է պատրաստ լինել ամեն օր ծառայելու Նրան և մեզ շրջապատող մարդկանց:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ մենք կգտնենք մեր կյանքը, եթե մենք կորցնենք այն հանուն Նրա:

Հիմնվելով ձեր կարդացածի վրա, լրացրեք հետևյալ սկզբունքը.

Եթե մենք կորցնենք մեր կյանքը հանուն Հիսուս Քրիստոսի, ապա _____. . .:

Կարդացեք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետևյալ խոսքերը, իսկ հետո քննարկեք դրան հետևող հարցերի պատասխանները:

«Ես հավատում եմ Փրկչին, որն ասում էր մեզ, որ եթե մենք չկորցնենք մեզ ուրիշներին ծառայելու մեջ, մեր կյանքը նպատակից զուրկ կլինի: Ովքեր միայն իրենց համար են ապրում, ի վերջո, կծկվում են, և, այլ կերպ ասած, կորցնում են իրենց կյանքը, մինչդեռ նրանք, ովքեր կորցնում են իրենց մյուսներին ծառայելու մեջ, աճում ու ծաղկում են, արդյունքում պահպանելով իրենց կյանքը» («Ի՞նչ եմ ես արել ինչ-որ մեկի համար այսօր»: *Ensign* կամ *Լիահոնա*, նոյ. 2009, 85):

- Դուք ճանաչո՞ւմ եք որևէ մեկին, ով կորցրել է իր կյանքը Հիսուս Քրիստոսի համար: Ի՞նչ ազդեցություն է ունեցել այդ որոշումն այդ մարդու վրա:

© 2015 BY Intellectual Reserve, Inc. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԵՆ: